

Կայքերի մշակման դասընթացավար / ուսումնական բովանդակություն մշակող

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է Կայքերի մշակման մասնագետի, ով կմիանա կրթական բովանդակություն մշակող թիմին, կվարի Կայքերի մշակման դասընթացներ, կմշակի Թումո կենտրոնների ուսանողների համար նախատեսված կրթական բովանդակությունը և նյութը՝ զարգացնելով և կատարելագործելով Թումոյի կրթական պլանը:

Աշխատանքային գործառույթներ

- Մշակել և վարել Կայքերի մշակման դասընթացներ Թումո ուսանողների համար
- Աշխատել Երևանում, ինչպես նաև գործուղվել այլ Թումո կենտրոններ՝ տարեկան մի քանի անգամ վարելու մեկ ամիս տևողությամբ դասընթացներ
- Զարգացնել ուսանողների հմտությունները՝ մշակելով ինքնուսուցման կրթական ծրագիրը
- Յուրաքանչյուր դասընթացի ավարտին հավաքագրել և գնահատել ուսանողների արդյունքները
- Ստուգել ուսանողների ինքնուսուցման ծրագրի արդյունքները՝ ապահովելով հետադարձ կապ
- Անհրաժեշտության դեպքում իրականացնել այլ առաջադրանքներ

Անհրաժեշտ որակավորումներ և հմտություններ

- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ որպես PHP ծրագրավորող
- Օբյեկտ կողմնորոշված ծրագրավորման հմտություններ և փորձ
- SQL ծրագրավորման հմտություններ և փորձ

- PHP ծրագրավորման փորձառություն՝ RDBM-ների գործածմամբ (ինչպես MySQL)
- Front-end ծրագրավորման փորձառություն HTML, CSS և JavaScript լեզուներով
- Open source CMS պլատֆորմների փորձառություն (WordPress, Drupal, Joomla, և այլն)
- API-ներով աշխատանքի փորձառություն
- Version control-ով (GIT) աշխատանքի փորձառություն

Դիմելու կարգը՝

Դիմելու համար խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը jobs@tumo.org էլ. հասցեին: Խնդրում ենք նամակի վերնագրում նշել՝ «Կայքերի մշակման դասընթացավար / ուսումնական բովանադակություն մշակող»: Կապ կհաստատվի միայն նախնական ընտրությունն անցած հավակնորդների հետ: